Project funded by EUROPEAN UNION

WETOUR

Black Sea CROSS BORDER COOPERATION

Common borders. Common solutions.

ԴԱՍԸՆԹԱՑ 2. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՄԱՐՔԵԹԻՆԳ ԵՎ ՄԵՆԵՋՄԵՆԹ

ՄՈԴՈՒԼ 1: ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԲԻԶՆԵՍԻ ՀԻՄՆՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ)

Բովանդակություն

Զբոսաշրջությունը որպես տնտեսական գործունեություն 2
Զբոսաշրջային ռեսուրսները 2
Զբոսաշրջության ձևերը և տեսակները 3
Էկոզբոսաշրջության ֆենոմենը 4
Զբոսաշրջային ծառայությունները 5
Բիզնես սկսելը 5
Ինչպես մշակել բիզնես պլան 6
Ինչպես հիմնել և վարել բիզնեսը 6
Կարգավորող ազգային օրենսդրությունը 7
Անհրաժեշտ փաստաթղթավորումը 7
Անձնակազմի կառավարում 9
Մարքեթինգ (Ինչպես զարգացնել բիզնեսը մարքեթինգի միջոցով) 11
SWOT վերլուծություն 12
Գրականություն 14

Զբոսաշրջությունը որպես տնտեսական գործունեություն

1) Զբոսաշրջության սահմանումը

Համաձայն ՄԱԿ ԶՀԿ Զբոսաշրջության տերմինների բառարանի՝ Զբոսաշրջությունը սոցիալական, մշակութային և տնտեսական ֆենոմեն է, որն իրենից ներկայացնում է մարդկանց ճանապարհորդությունն իրենց սովորական միջավայրից դուրս վայրեր կամ երկրներ անձնական կամ գործնական/մասնագիտական նպատակներով:

Այս մարդիկ կոչվում են այցելուներ (որոնք կարող են համարվել զբոսաշրջիկներ կամ էքսկուրսանտներ, ռեզիդենտներ և ոչ ռեզիդենտներ), որոնց գործունեությունը կապված է զբոսաշրջության հետ՝ ներառելով նաև զբոսաշրջային ծախսեր:

2) Զբոսաշրջության էությունը՝ որպես տնտեսական գործունեություն

Ի՞նչ է անում զբոսաշրջիկը տնտեսական տեսանկյունից:

Զբոսաշրջիկն ապրում է զբոսաշրջային վայրում/երկրում (destination)՝ սպառելով ապրանքներ և ծառայություններ:

Զբոսաշրջիկը չի կատարում վարձու աշխատանք զբոսաշրջային վայրում/երկրում և չի վարձատրվում տեղական գործատուների կողմից:

Ըստ էության զբոսաշրջիկը զբոսաշրջային վայրում/երկրում ծախսում է դրանից դուրս վաստակած փողը՝ զբոսաշրջային վայրում/երկրում ապրանքների ու ծառայությունների նկատմամբ առաջացնելով լրացուցիչ պահանջարկ:

Զբոսաշրջային ռեսուրսներն օգտագործվում են զբոսաշրջային վայրում/երկրում զբոսաշրջային ծառայությունների պահանջարկը բավարարելու և զբոսաշրջիկների պատշաճ կացությունն ապահովելու նպատակով:

Հետևաբար, բոլոր շահագրգիռ կողմերը պետք է համագործակցեն և անեն առավելագույնը՝ ապահովելով՝

- ռեսուրսների արդյունավետ և կայուն օգտագործում, և
- բազմազան, մրցունակ և կայուն զբոսաշրջային արդյունքների և ծառայությունների ձևավորում,
- եկամտի ստեղծում,
- տնտեսական աճ,
- կենսամակարդակի բարձրացում,
- զբոսաշրջային ռեսուրսների վերարտադրություն և պահպանում:

Զբոսաշրջային ռեսուրսները

<u>1) Սահմանումը</u>

Զբոսաշրջային ռեսուրսները բնական, պատմական, մշակութային, կրոնական, մարդկային, սոցիալական, տնտեսական, գիտական, ժամանցային կամ այլ ռեսուրսներ են, որոնք կարող են դառնալ զբոսաշրջային արդյունք կամ գրավչություն, կամ զբոսաշրջային

փաթեթի մաս և ծառայել զբոսաշրջիկների ինտելեկտուալ, հոգևոր, նյութական, ֆիզիկական, սոցիալական, տնտեսական կամ այլ պահանջմունքների բավարարմանը:

2) Տեսակները

Զբոսաշրջային ռեսուրսները դասակարգվում են բնական և մարդածին ռեսուրսների:

Բնական ռեսուրսներ են բնության հատուկ պահպանվող տարածքները (ազգային պարկեր, բնության հուշարձաններ, արգելոցներ), բնապատկերները, լանդշաֆտները, աշխարհագրական և բնական առանձնահատկությունները, բարենպաստ բնական պայմանները, զբոսաշրջային գրավչություն հանդիսացող այլ բնական օբյեկտները:

Մարդածին ռեսուրսները դասակարգվում են նյութական և ոչ նյութական ռեսուրսների:

Նոյութական ռեսուրսներն են պատմամշակութային հուշարձանները, պատմական շենքերը, շինություններն ու առարկաները, ենթակառուցվածները և այլ զբոսաշրջային գրավչություն հանդիսացող օբյեկտներն ու առարկաները:

Ոչ նյութական ռեսուրսներն են ոչ նյութական արժեքները՝ ձևավորված մշակութային, ավանդական, գիտական և ժամանցային գործունեությունից:

Զբոսաշրջության ձևերը և տեսակները

1) Ձևերը

Տվյալ երկրի համար զբոսաշրջություն դասակարգվում է երեք հիմնական ձևերի՝ ներգնա, արտագնա և ներքին:

Համաձայն ՄԱԿ ԶՀԿ Զբոսաշրջության տերմինների բառարանի.

- Ներգնա զբոսաշրջությունը տվյալ երկրի ոչ ռեզիդենտների զբոսաշրջությունն է այդ երկրում:
- Արտագնա զբոսաշրջությունը տվյալ երկրի ռեզիդենտների զբոսաշրջությունն է այդ երկրից դուրս:
- Ներքին զբոսաշրջությունը տվյալ երկրի ռեզիդենտեների զբոսաշրջությունն է այդ երկրի սահմաններում:

2) Տեսակները:

Զբոսաշրջության տեսակը որոշվում է պայմանավորված տվյալ զբոսաշրջության համար օգտագործվող զբոսաշրջային արդյունքով կամ ռեսուրսով:

Այդպիսով կարող են ներկայացվել զբոսաշրջության հետևյալ առանձնահատուկ տեսակները.

- Պատմական
- Մշակութային
- Կրոնական
- Բնական
- MICE
- Խոհանոցային/Գաստրո
- Քաղաքային

- Արև-ավազ-ծով
- Գյուղական և ագրո
- Բուժական
- Ձմեռային,
- Այլ.

Նշված դասակարգումը հիմնականում պահանջված է և օգտագործվում է զբոսաշրջության ոլորտի ներկայացուցիչների կողմից մարքեթինգային նպատակներով:

Էկոզբոսաշրջության ֆենոմենը

Էկոզբոսաշրջությունը զբոսաշրջության տեսակ չէ, այն զբոսաշրջության որակական առանձնահատկություն է:

Էկոզբոսաշրջություն համարվելու համար զբոսաշրջությունը պետք է բավարարի երեք հիմանական չափանիշների:

Համաձայն Էկոզբոսաշրջության Միջազգային Հանրության/ International Ecotourism Society՝ էկոզբոսաշրջությունը պատասխանատու զբոսաշրջություն է բնական միջավայրերում, պայմանով որ.

- Պահպանում է շրջակա միջավայրը,
- Նպաստում է տեղի բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, և
- Ներառում է գիտակցություն և կրթություն թե՛ հյուրերի և թե՛ աշխատողների համար:

Էկոզբոսաշրջության սկզբունքներն են.

- Նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա ֆիզիկական, սոցիալական, վարքագծային և հոգեբանական ազդեցությունը,
- Ձևավորել շրջական միջավայրի և մշակույթի նկատմամբ գիտակցություն և հարգանք,
- Ապահովել դրական փորձառություն թե՛ այցելուների և թե՛ հյուրընկալողների համար,
- Ապահովել ուղղակի ֆինանսական միջոցների ձևավորում շրջակա միջավայրի պահպանության համար,
- Ապահովել ֆինանսական եկամուտներ տեղի բնակչության և բիզների համար,
- Այցելուներին պարգևել անմոռանալի և գիտակցական փորձառություն՝ ի նպաստ հյուրընկալող երկրի քաղաքական, սոցիալական և մշակութային միջավայրի նկատմամբ նրանց վերաբերմունքի ու հարգանքի ձևավորման ու բարձրացման,
- Ձևավորել և գործարկել շրջակա միջացայրի վրա նվազագույն ազդեցություն ունեցող կարողություններ,
- Ճանաչել և հարգել տեղի բնակչության իրավունքներն ու հոգևոր հավատալիքները և աշխատել նրանց հետ համագործակցությամբ ու ստեղծել հզորություններ:

Ի վերջո Էկոզբոսաշրջության մի գերազանց բնորոշում Նոր Զելադիայի համալսարաններից մեկի մի պրոֆեսորի կողմից.

“Երբ մարդը բնության մաս է կազմում, զբոսաշրջության բոլոր տեսակներն էլ էկոզբոսաշրջություն են, իսկ եթե մարդն առանձնացված է բնությունից, Էկոզբոսաշրջությունը հնարավոր չէ”:

Զբոսաշրջային ծառայությունները

1) Սահմանումը

Զբոսաշրջային ծառայությունները զբոսաշրջիկներին մատուցվող և նրանց պահանջմունքների բավարարմանն ուղղված ծառայություններն են:

2) Տեսակները

Օրինակ՝ զբոսաշրջային ծառայություններ են

- Զբոսաշրջային օպերատորի և զբոսաշրջային գործակալի ծառայությունները,
- Հյուրանոցային ծառայությունները,
- Տրանսպորտային ծառայությունները,
- Ավովարձույթի ծառայությունը,
- Հանրային սննդի ծառայությունները,
- Համաժողովների, մշակութային, բնապահպանական, սպորտային, գործնական և այլ միջոցառումների կազմակերպումը,
- Զբոսավարի և ուղեկցորդի ծառայությունները,
- Այլ:

Բիզնես սկսելը

1) Բիզնես հիմնելը

Սկզբից անհրաժեշտ է պարզել, թե ինչու եք ուզում սկսել Ձեր սեփական բիզնեսը և ինչ եք Դուք ակնկալում:

- Ֆինանսական շահ
- Կենսափորձ
- Տեղական համայնքի զարգացմանն աջակցություն

Ի՞նչ բիզնես եք Դուք ուզում հիմնել և ինչ ծառայություններ մատուցել:

Երբ արդեն որոշել եք, թե ինչ բիզնես եք ուզում, ինչու, և, որ դա է ճիշտը Ձեզ համար, Դուք պետք է.

- Հիմնեք և ներկայացնեք պետական գրանցման իրավաբանական անձ (առևտրային կազմակերպություն, օրինակ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, բաժնետիրական ընկերություն, այլ), կամ
- Հաշվառվել որպես անհատ ձեռնարկատեր, և
- Օրենքով նախատեսված դեպքերում ստանալ անհրաժեշտ լիցենզիաներ:

2) Բիզնես պլանի մշակում

Համապարփակ և լավ մտածված բիզնես պլանի անհրաժեշտությունն էական է՝ որպես հաջողակ բիզնեսի զարգացման համար կարևոր գործիք և նախագիծ:

Այն խարախուսում է կենտրոնանալ հիմնական և ելակետային հետևյալ խնդիրների վրա.

- Բիզնես հայեցակարգ. Արդյո՞ք Ձեր նպատակները ճիշտ են սահմանված
- Ռազմավարական զարգացում. Արդյո՞ք Դուք ճիշտ ռազմավարություն եք ընդունել և կարող եք այն իրականացնել,
- Գործունեության պլանավորում. Որպես ուղեցույց, բիզնես պլանը պատկերացում է տալիս բիզնեսի և դրա իրականացման վերաբերյալ ներքին և արտաքին շահագրգիռ կողմերի համար:
- Ֆինանսական և ներդրումային պլանավորում. Ներդրողներին, բիզնեսում առողջ և տեղեկացված ներդրում կատարելու համար, անհրաժեշտ է տեղեկություն Ձեր բիզնես գաղափարի, պլանավորված գործառնական ռազմավարությունների և ֆինանսական կանխատեսումների մասին: Հետևաբար վստահելի բիզնես պլանը հիմնարար գործիք է ներդրում եր ներգրավելու համար:

Ինչպես մշակել բիզնես պլան

Բիզնես պլանը փաստաթուղթ է, որը նկարագրում է ձեր բիզնեսը, ապրանքներն ու ծառայությունները, որոնք դուք վաճառում եք, ինչպես նաև այն հաճախորդներին, որոնց դուք վաճառում եք: Այն բացատրում է ձեր բիզնես ռազմավարությունը: Ինչպես եք պատրաստվում կառուցել և զարգացնել ձեր բիզնեսը, որն է ձեր մարքեթինգային ռազմավարությունը և ովքեր են ձեր մրցակիցները:

Ի՞նչ է մտնում բիզնես պլանի մեջ: Բիզնես պլանի մշակման միասնական մոտեցում չկա, չնայած որոշ հիմնական տարրեր կարևոր են ցանկացած բիզնես պլանի համար

- Ամփոփագիր
- Բիզնեսի նկարագրություն (ապրանքներ և ծառայություններ)
- Ոլորտի վերլուծություն
- Շուկայի վերլուծություն
- Մրցակցային դաշտի վերլուծություն
- Մարքեթինգ և վաճառք
- Կազմակերպական կառուցվածք
- Ֆինանսական վերլուծություն (վաճառքի և եկամուտների նկարագիր, շահույթի և վնասի հաշվեկշիռ, ֆինանսական հոսքեր, հաշվապահական հաշվեկշիռ)

Ինչպե՞ս հիմնել և վարել բիզնեսը

- Հստակեցրեք Ձեր գաղափարը և սահմանեք Ձեր “Ինչուն”
- Կազմեք Ձեր Բիզնես պլանը
- Ապահովեք ֆինանսական ռեսուրսները
- Սահմանեք Ձեր բիզնեսի կազմակերպական իրավական կառուցվածքը

- Հիմնադրեք և ներկայացրեք պետական գրանցման առևտրային կազմակերպություն/հաշվառվեք որպես անհատ ձեռնարկատեր, ստացեք հարկային կոդ
- Օրենքով նախատեսված դեպքերում ստացեք համապատասխան լիցենզիաներ
- Ստացեք անհրաժեշտ ապահովագրություն
- Հստակեցրեք Ձեր ծրագիրն ու գործիքները
- Ձևավորեք աշխատակազմը
- Գործեք և աճեցրեք Ձեր բիզնեսը

Կարգավորող ազգային օրենսդրությունը

Լավ խաղալու և հաղթելու համար անհրաժեշտ է լավ իմանալ խաղի կանոնները – հաջող բիզնես վարելու համար անհրաժեշտ է իմանալ այն կարգավորող օրենսդրությունը:

1. Իմանալու համար, թե ինչ է ձեռնարկատիրական գործունեությունը, որոնք են իրավաբանական անձանց, այդ թվում՝ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների տեսակները, ինչ կանոններ են գործում բիզնես վարելու և գործարքներ կնքելու համար, և թե ինչպես կառավարել իրավաբանական անձանց անհրաժեշտ է ուսումնասիրել
- Քաղաքացիական օրենսգիրքը
- Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքը
- Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենքը
2. Բիզնեսի հարկումը կարգավորվում է
- Հարկային օրենսգրքով
3. Զբոսաշրջությունը կարգավորող հիմնական իրավական ակտը
- Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին օրենքն է
4. Վիզային ռեժիմը և օտարերկրացիների կարգավիճակը պատկերացնելու համար ուսումնասիրեք
- Օտարերկրացիների մասին օրենքը
5. Զբոսաշրջությունը կարգավորվում է նաև այլ օրենքներով և իրավական այլ ակտերով

Անհրաժեշտ փաստաթղթավորումը

1) <u>Ի՞նչ է հաշվառումը</u>

Լավ հաշվառումը կարևոր է Ձեր բիզնեսի սահուն և արդյունավետ գործունեության (և վերջնական հաջողության) համար: Բոլոր ձեռնարկությունները պետք է ստեղծեն և պահպանեն հաշվառումներ՝ օրենսդրությանը և գործարար շրջանառության սովորույթներին համապատասխան:

ISO 15489-1:2001 ստանդարտը սահմանում է հաշվառումը՝ որպես. «տեղեկություն, որը ստեղծվել, ստացվել և պահպանվում է որպես ապացույց փաստացի գործունեության և տեղեկություն կազմակերպության կամ անձի կողմից՝ իրավական պարտավորությունների կամ բիզնես գործընթացի շրջանակներում»:

Հաշվառումը բիզնեսի վերաբերյալ տեղեկատվության պահպանումն ու վարումն է օրենքով սահմանված կարգով: Հաշվառման հիմնական առանձնահատկությունն այն է, որ հանդիսանում է փաստացի գործունեության և գործարքների ապացույց:

2) <u>Ինչո՞ւ է անհրաժեշտ վարել հաշվառում</u>

Հաշվառում վարելու պատճառները տարբեր են: Ձեր բիզնեսի հաշվառումը կնշանակի, որ Դուք կատարում եք Ձեր իրավական, ֆինանսական և վարչական պարտավորությունները՝ միաժամանակ ստեղծելով պատմական տեղեկատվություն Ձեր բիզնեսի մասին: Պատմական գրառումներն անգնահատելի են, որոնք օգնում են Ձեր բիզնեսի տարեցտարի առաջընթացի համեմատության և հետևելու, հաճախորդների և մատակարարների հետ առողջ և հաջող հարաբերություններ պահպանելու, EETLS էկոչափանիշներին Ձեր գործունեության համապատասխանության գնահատման գործընթացներին: Հաշվառումը կարևոր է նաև բիզնես որոշումների ընդունման արդյունավետության ապահովման տեսանկյունից:

Իրենց բնույթով բիզնես գործարքները, գործառնությունները և ընթացակարգերը ստեղծում են փաստաթղթեր. պայմանագրեր, անդորրագրեր, հաշիվ-ապրանքագրեր, հավաստագրեր և այլն, հետևաբար պետք է գործի պարզ, բայց արդյունավետ համակարգ՝ ապահովելու համար, որ այդ փաստաթղթերը ստեղծվեն, բաշխվեն, օգտագործվեն, պահպանվեն և վերացվեն ճիշտ և արդյունավետ կերպով: Կարևոր է, որ Ձեր հաշվապահական հաշվառման համակարգը գործի գործունեության սկզբից և, որ այն աշխատի Ձեզ և Ձեր բիզնեսի համար:

3) <u>Ինչպե՞ս ձևավորել հաշվառման համակարգ</u>

Հաշվառման միասնական համակարգ չկա, ուստի խորհուրդ է տրվում օգտագործել այնպիսի համակարգ, որն աշխատում է Ձեզ համար: Պահպանեք այն պարզ և հեշտ օգտագործման համար, բայց արդյունավետ և ապահով: Պարզապես պետք է հաշվառումը վարել օրենսդրությանը և գործարար շրջանառության սովորույթներին համապատասխան:

Ստորև բերված են մի քանի ընդհանուր ուղեցույցներ, որոնք պետք է հաշվի առնել հաշվառման համակարգ ստեղծելիս և վարելիս.

Որոշեք, թե որ գրառումներն եք պատրաստվում պահպանել և զգուշորեն հեռացրեք ցանկացած ավելորդ տեղեկատվություն (հաշվառման մեջ չներառելու համար),

- Անվանեք ֆայլերը տրամաբանորեն (խուսափելով երկար, շփոթեցնող կոդերից), որպեսզի ֆայլերը հեշտությամբ նույնականացվեն (հասկացվեն) և հասանելի լինեն Ձեր թիմի ցանկացած անդամի համար: Ֆայլի անունից պետք է պարզ լինի, թե ինչ է այն պարունակում,
- Ֆինանսական գրառումներն անվանելիս ավելի լավ կլինի ունենալ համապատասխանաբար շաբաթական, ամսական, տարեկան ֆայլեր,
- հին ֆայլերը հեռացնելիս համոզվեք, որ բոլոր ֆայլերի անունները և ինֆորմացիան վերացրել եք՝ հետագայում հնարավոր շփոթությունից կամ ֆայլերի սխալ տեղադրումից խուսափելու համար,
- Համոզվեք, որ ֆայլերի անունները հեշտությամբ տեսանելի են դրանց պահեստավորման միավորներում (ֆայլերի պահարաններ, պահեստավորման տուփեր և այլն)

- Բոլոր ֆայլերը պետք է վերադարձվեն իրենց պահեստային միավորին, երբ ավարտեք նրանց հետ աշխատանքը, այդպիսով ապահովելով, որ հետագայում հեշտ գտնվեն,
- Մի գերբեռնեք պահեստային միավորները,
- Պարբերաբար տեսակավորեք և թարմացրեք գրառումների ֆայլերը, օրինակ՝ ծրագրի ավարտին կամ տարեվերջին, հին գրառումները, որոնք այլևս կանոնավոր չեն օգտագործվում (բայց պետք է պահպանվեն իրավական և/կամ ֆինանսական պատճառներով) պետք է տեղափոխվեն երկարաժամկետ պահեստավորման տուփեր/ միավորներ,
- Երբ օրենսդրությամբ այլևս չի պահանջվում տեղեկությունների պահպանությունը՝ խնամքով հեռացրեք դրանք, հատկապես՝ գաղտնի տեղեկատվությունը:

4) <u>Ի՞նչ հաշվառում է պետք վարել</u>

- Ֆինանսական հաշվառում

Ֆինանսական հաշվառման մանրամասնության աստիճանը տարբեր բիզնեսներում տարբեր կարող է լինել, սակայն հիմնականում այն պետք է ներառի բոլոր մուտքերը և ծախսերը. գնված կամ վաճառված բոլոր ապրանքները:

- Մարդկային ռեսուրսների (անձնակազմի) հաշվառում (վերաբերում է մարդկային ռեսուրսների կառավարման բաժնին**)**
- Առողջապահական և անվտանգության ապահովման հաշվառում
- Վիճակագրական հաշվառում

Անձնակազմի կառավարում

1) <u>Ինչո՞ւ է անձնակազմի կառավարումն այդքան կարևոր</u>

- Հավակնություններին և նպատակներին հասնելու կարողություն

Ընդունված է, որ ցանկացած բիզնեսի ամենաարժեքավոր ռեսուրսը իր նպատակներին և հավակնություններին հասնելու համար իր աշխատակիցներն են: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ իրենց նպատակներին հասնելու մեջ ամենահաջողակները եղել են նրանք, որոնք լավագույն փորձ են ցուցաբերել Մարդկային ռեսուրսների (HR) հետևյալ ոլորտներում. Վերապատրաստում, զարգացում, բարենպաստ հոգեբանական մթնոլորտի ապահովում, մոտիվացիա, խթաններ և պարգևներ:

- Մրցակցային առավելություն

Հայտնի է նաև, որ մրցակցային առավելությունը Մարդկային ռեսուրսների ճիշտ կառավարման արդյունք է: Ինչպես Ձեր ընկերության, այնպես էլ անձնակազմի համար կարևոր է, որ անձնակազմի կառավարման ոլորտում լավ փորձ դրսևորվի՝ մրցակցային միջավայրում գոյատևելու համար:

2) <u>Ինչպե՞ս ձևավորել և կառավարել անձնակազմը</u>

- Ընտրություն և ընդունում

Հարցրու ինքդ քեզ. Ի՞նչ առաջադրանքներ եք տալու աշխատողին, և ի՞նչ կարողություններ ու որակավորումներ պետք է ունենա աշխատողը, որպեսզի կարողանա կատարել իր դերը բարձր մակարդակով:

Որոշելուց հետո, թե ինչ է պահանջվելու, այն պետք է վերածվի աշխատանքի նկարագրության և պաշտոնի անձնագրի: Այն կարող է այնուհետև գովազդվել սոցիալական ցանցերում, կայքերում կամ կարող է տարածվել խոսքից-խոսք:

Տիպային աշխատանքի նկարագրությունը պետք է ներառի՝ Աշխատանքի անվանումը, վարձատրության աստիճանը/դրույքաչափը – պետք է համապատասխանի ապրուստի նվազագույն զամբյուղին, զբաղվածության եղանակը (օրինակ՝ լրիվ դրույքով, կես դրույքով, սեզոնային, մշտական, կարճաժամկետ և այլն), աշխատանքի վայրը, ո՞վ է պատասխանատու աշխատողի համար և եթե տարբեր է, թե ում են նրանք զեկուցելու, եթե աշխատողը պետք է պատասխանատու լինի այլ աշխատողների համար, ովքեր են նրանք, պաշտոնի հիմնական նպատակի նկարագրություն (իդեալականում մեկ նախադասություն), հիմնական պարտականությունների ցանկը, ինչպես դիմորդը պետք է դիմի, ժամկետներ:

- Անձնակազմի իրավունքներն ու պարտականությունները

Կարևոր է ունենալ աշխատողների պաշտպանության քաղաքականություն, որը հիմնված է ինչպես ազգային ստանդարտների, այնպես էլ Աշխատանքի միջազգային ստանդարտների վրա՝ ոչ միայն պահպանելով օրենսդրության պահանջները, այլ նաև նպատակ ունենալով ներգրավել հնարավոր լավագույն աշխատակիցների:

Աշխատակիցների պաշտպանության քաղաքականությունը պետք է ներառի. գրավոր աշխատանքային պայմանագրեր անձնակազմի յուրաքանչյուր անդամի համար, հղիության, մայրության և հայրության արձակուրդի ընթացակարգեր և սխեմաներ, կենսաթոշակային սխեմաներ, արհմիությունների անդամություն, կոլեկտիվ պայմանագրեր և անդամների շահերի ներկայացում արհմիությունների կողմից, խտրականության բացառման քաղաքականություն և ընթացակարգեր, բողոքների և փոխհատուցումների հետ կապված արդյունավետ ընթացակարգ:

Անձնակազմի իրավունքներն ու պարտականությունները կարող են սահմանվել յուրաքանչյուր առանձին աշխատակցի հետ կնքված պայմանագրով և պետք է համապատասխանի ամենաբարձր չափանիշներին:

- Հաշվառում

Հարցրու ինքդ քեզ

- Ի՞նչ տեղեկատվություն է անհրաժեշտ ընկերությանը սահուն աշխատելու համար
- Ի՞նչ տեղեկատվություն է ստանում ընկերությունը, ումից և ինչու
- Ի՞նչ տեղեկատվություն պետք է տա ընկերությունը

Անձնակազմի հաշվառում: Անձնական տվյալներ (անունը, հասցեն, շտապ օգնության կապը, կրթությունը, ազգային ապահովագրության համարը և այլն), Ընկերության հետ աշխատողների պատմությունը (աշխատանքի անցնելու ժամկետը, աշխատանքի անվանումը և այլն), Աշխատանքի պայմանների վերաբերյալ մանրամասներ (վարձատրություն, արձակուրդի իրավունք, աշխատանքի ժամեր և այլն): Ե՛վ աշխատողը, և՛ գործատուն պետք է գրանցեն իրենց աշխատանքային պայմանագրի մասին՝ ապագայում հնարավոր տարաձայնություններից

խուսափելու համար: Վերապատրաստում և զարգացում, ներառյալ հետագա կրթությունը ընկերության հետ, կարգապահական տույժեր և այլն:

Կանոնադրական հաշվառում. սա կարող է տարբեր լինել՝ կախված նրանից, թե որ երկրում եք գործում, բայց պետք է ներառի հարկերը, ազգային ապահովագրությունը, արձակուրդի իրավունքը, աշխատանքային ժամերը, վարձատրությունը, ժամանակավոր անաշխատունակության նպաստները, դժբախտ պատահարները և վնասվածքները:

Ընկերության հաշվառում. Աշխատակիցների ընտրության և ընդունման մանրամասները, Վերապատրաստման և զարգացման մանրամասները անձնակազմի յուրաքանչյուր անդամի համար, Հիվանդություն, բացակայություն, կարգապահություն, անձնակազմի շրջանառություն; Աշխատանքային պայմանագրի դադարման մանրամասներ:

Ընտրություն և ընդունում. Աշխատանքի նկարագրություն, պաշտոնի անձնագիր, դիմումի ձև, ինքնակենսագրություն

- **Վերապատրաստում և զարգացում**

Որպես բիզնեսի արդյունավետ կայուն կառավարման մաս, կարևոր է ապահովել աշխատակիցների վերապատրաստում և զարգացում՝ կիրառելով նաև «աշխատանքի ընթացքում» ուսուցման մեթոդը: Դա կարելի է անել՝ ներգրավելով համապատասխան կրթական հաստատություններ կամ մասնագիտացված գործակալություններ, որոնք կարող են տրամադրել հարմարեցված ուսուցում, ժամանակացույց և մեթոդաբանություն (որը կարող է պահանջվել, եթե, օրինակ, անհատը ցանկանում է դառնալ որակավորված զբոսավար), կամ դուք ինքներդ կարող եք մշակել վերապատրաստման պլան:

- Խրախուսում և պարգևատրում

Որպես պատասխանատու գործատու՝ դուք պետք է խրախուսեք աշխատակիցներին վերապատրաստվելու աշխատանքի արդյունավետության բարձրացման, մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով (օրինակ՝ ավելի բարձր աշխատավարձ, վճարովի արձակուրդ և ճկուն աշխատանքային ժամեր):

Մարքեթինգ (Ինչպե՞ս զարգացնել բիզնեսը մարքեթինգի միջոցով)

Հիմնական մարքեթինգային քայլեը.

- Ո՞րն է Ձեր ապրանքի/ծառայության շուկան
- Գնահատեք Ձեր զբոսաշրջային արդյունքը
- Մրցակցային դաշտի վերլուծություն
- SWOT վերլուծություն

Իմացեք Ձեր շուկան

Հարցրու ինքդ քեզ հետևյալը.

- Դուք Ձեր ծառայություններն առաջարկում եք ներքի՞ն, թե՞ միջազգային շուկային
- Դուք Ձեր ծառայություններն առաջարկում եք զբոսաշրջիկներին կարճաժամկետ, թե՞ երկարաժամկետ կացության համար

Դուք պետք է իրատես լինեք այս հարցում և հիմքում դնեք հասանելիության բարձրացումը, այցելուին առաջարկվող փորձառությունը, ինչպես նաև փողի արժեքը:

Իմացեք Ձեր ապրանքը/ծառայությունը

Հարցրու ինքդ քեզ հետևյալը.

- Ի՞նչն է Ձեր ապրանքը/ծառայությունը դարձնում առանձնահատուկ
- Ո՞րն է դրա բացառիկությունը (USP)
- Ինչո՞ւ պետք է զբոսաշրջիկը Ձեր ապրանքը/ծառայությունը նախընտրի
- Որքանո՞վ է հասանելի Ձեր ապրանքը/ծառայությունը
- Արդյո՞ք դրա դեպքում փողի արժեքը բարձր է

Մրցակցային վերլուծություն

Ձեր նպատակային շուկան որոշելու համար Դուք պետք է ուսումնասիրեք մրցակցային շուկան: Հարցրեք ինքներդ Ձեզ հետևյալը.

- Որևէ մեկն առաջարկու՞մ է համանման ապրանքը/ծառայությունը Ձեր երկրում, տարածաշրջանում
- Ինչպե՞ս են համանման առաջարկները մրցակցում Ձեր առաջարկների հետ
- Համանման ապրանքի/ծառայության դեպքում ինչպիսի՞ն է փողի արժեքը
- Ինպիսի՞ն է համանման առաջարկների փորձառնական արժեքը
- Ինչպիսի՞ն է համանման առաջարկների հասանելիությունը

SWOT վերլուծություն

Դուք պետք է բացահայտեք ձեր բիզնեսի ուժեղ և թույլ կողմերը (ներքին գործոններ) և հնարավորություններն ու սպառնալիքները (արտաքին գործոններ): SWOT վերլուծությունը արդյունավետ միջոց է Ձեր պլանը կառուցելու համար: Այն կարող է օգնել Ձեզ վերլուծել, թե ներկայումս որտեղ եք գտնվում Ձեր բիզնեսի և արտադրանքի հետ, որպեսզի նպաստեք Ձեր բիզնեսի գալիք հաջողությանը, փորձեք ինքնաքննադատ լինել SWOT-ում:

Ուժեղ կողմեր

Կարողություններ,
Մրցակցային առավելություններ,
Ռեսուրսներ, ակտիվներ, մարդկային ռեսուրսներ,
Փորձ, գիտելիք, տեղեկատվական բազա
Ֆինանսական ռեսուրսներ
Մարքեթինգ, հասանելիություն
Ինովացիա
Աշխարհագրական դիրք
Գին, արժեք, որակ
Ընթացակարգեր, համակարգեր, տեղեկատվական տեխնոլոգիաներ, կապեր
Առաջարկի առավելություններ

Թույլ կողմեր

Կարողությունների պակաս
Մրցակցային առավելությունների պակաս
Հեղինակության, ներկայանալիության, հասանելիության պակաս
Ժամկետներ, վերջնաժամկետներ և ճնշումներ
Ֆինանսական խնդիրներ
Նվազ ֆինանսական հոսքեր
Շարունակականության և մատակարարման ցանցի խնդիրներ
Հիմնական գործունեության էֆեկտ
Տվյալների, պլանների և ծրագրերի հուսալիություն
Կառավարում և հաջողություն

Սպառնալիքներ

Քաղաքական և տնտեսական ազդեցություն
Օրենսդրական ազդեցություն
Շրջակա միջավայրի ազդեցություն
Մրցակցային մտադրություններ
Շուկայի պահանջարկ
Տեխնոլոգիական, ծառայությունների և գաղափարների ինովացիա
Նոր պայմանագրեր և գործընկերներ
Ռեսուրսների կորուստ
Խոչընդոտների ի հայտ գալը
Թույլ կառավարման ռազմավարություններ
Ներքին և արտաքին տնտեսական պայմաններ

Հնարավորություններ
Շուկայի զարգացումներ
Ոլորտի և կենսակերպի զարգացման միտումներ
Ինովացիա և տեխնոլոգիական զարգացում
Գլոբալ ազդեցություններ
Հորիզոնական և ուղղահայաց շուկայական մեծություններ
Նպատակային շուկաներ
Աշխարհագրական ներմուծումներ-արտահանումներ
Հիմնական պայմանագրեր, մարտավարություններ, անակնկալներ
Բիզնեսի և արտադրական զարգացումներ

Գրականություն

1. International Recommendations for Tourism Statistics 2008, https://unstats.un.org/unsd/tradeserv/tourism/08-40120%20IRTS%202008_WEB_final%20version%20_22%20February%202010.pdf
2. Types of Tourism in The World, https://colorwhistle.com/types-of-tourism/
3. International Recommendations on Tourism Statistics (IRTS) Provisional draft Revision 5, https://unstats.un.org/unsd/tradeserv/EGTS/IRTS%20provisional%20draft%20v5%20as%20of%206%20September%2013pm.pdf
4. What is ecotourism , https://ecotourism.org/what-is-ecotourism/
5. https://articles.bplans.com/business-ideas/7-steps-to-starting-your-own-business/
6. https://www.shopify.com/ph/blog/how-to-start-a-business
7. https://joinup.ec.europa.eu/taxonomy/term/http_e_f_fdata_ceuropa_ceu_fdr8_fRecordManagementComponent
8. https://www.investopedia.com/terms/b/business-plan.asp
9. https://www.investopedia.com/terms/s/swot.asp